ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԻԿՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՇՈՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է.00.01 <<Հայոց պատմություն>> մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մինասյան Է. Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Ավագյան Ա. Գ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վարդազարյան Մ. Ե.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան
ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. սեպտեմբերի 30-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. օգոստոսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Անկախություն ձեռք բերելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից համարվեց եվրոպական կառույցների, մասնավորապես Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) հետ հարաբերությունների հաստատումը: ՀՀ-ը փորձում էր հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումներում ներգրավված բոլոր շահագրգիռ պետությունների և կառույցների հետ պահպանել բարեկամական հարաբերություններ: ՀՀ-ԵՄ հարաբերությունները կարևորվում են այն պատճառով, որ ԵՄ-ը փորձում է գործուն մասնակցություն ունենալ հարավկովկասյան տարածաշրջանի քաղաքական և տնտեսական գործընթացներին:

Նորանկախ ՀՀ-ի արտաքին քաղաքականության մեջ կարևորագույն ուղղություններից մեկը՝ ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումը առնչվում է ինչպես ՀՀ-ի միջազգային հարաբերությունների խորացման, այնպես էլ տնտեսական ինստիտուտների կայացման և ժողովրդավարության զարգացման հետ: ՀՀ-ԵՄ հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական մեծ նշանակություն ու արդիականություն: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում պարբերացման ենթարկել ՀՀ-ԵՄ հարաբերությունների ավելի քան 20-ամյա պատմությունը և արձանագրել երկուստեք հաջողությունները ու վերհանել առկա խնդիրները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն լուսաբանել ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունները 1992-2013 թթ., ինչպես նաև վեր հանել ԵՄ-ի դերակատարությունը ՀՀ-ում ժողովրդավարության, շուկայական տնտեսության անցման, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության կայացման գործընթացում: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Հարավային Կովկասի դերը և նշանակությունը ԵՄ-ի արտաքին քաղաքականության համատեքստում, ներկայացնել Հարավային Կովկասում և մասնավորապես ՀՀ-ում ԵՄ-ի <<շահերի բախումը>> ԱՄՆ-ի, ՌԴ-ի հետ, ինչպես նաև վերաբերմունքը Թուրքիայի և Իրանի նկատմամբ,

2. բացահայտել տնտեսական և քաղաքական ասպարեզում ԵՄ-ի վարած քաղաքականության ազդեցությունը ՀՀ-ում և նրա տրամադրած օգնությունը անցումային շրջանում գտնվող ՀՀ-ին վերափոխումների համար,

3. քննարկել ԵՄ-ի դերակատարությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում,

4. ներկայացնել ԵՄ-ի առաջ քաշած ծրագրերի իրականացման արդյունավետությունը ՀՀ-ում և այդ ծրագրերի արդյունքում այն վերափոխումների գործընթացը, որը տեղի է ունենում ՀՀ-ում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությունը շարադրել ենք պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների կիրառմամբ: Դրա շնորհիվ իրականացված ուսումնասիրությունը համակողմանի պատկերացում է տալիս Հարավային Կովկասում ԵՄ-ի հետապնդած նպատակների, դրանց հենքը կազմող քաղաքական և տնտեսական դրդապատճառների մասին, ՀՀ-ի և ԵՄ-ի միջև համագործակցության հաստատման պատմության, դրա արդյունքում երկուստեք ձեռք բերված հաջողությունների և առկա խնդիրների վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Հաշվի առնելով ատենախոսության նպատակները և խնդիրները, որպես մեկնակետ ընտրվել են 1992-2013 թվականները: 1992 թվականի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ը, ձեռք բերելով անկախություն, առաջին անգամ հենց 1992 թ. ՏԱՍԻՍ տեխնիկական օգնության շրջանակներում աջակցություն ստացավ ԵՄ-ից, ինչն էլ հաջող մեկնարկ հանդիսացավ հետագա երկկողմ համագործակցության ձևավորման համար: Ինչ վերաբերում է 2013 թվականին, ապա այն ունի կարևոր նշանակություն, քանզի ՀՀ-ում 2013 թ. տեղի ունեցան նախագահական ընտրություններ, և նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի երկրորդ պաշտոնավարման շրջանում ՀՀ-ն ընտրեց ինտեգրման եվրոպական արտաքին քաղաքականությունը ևս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Սույն ատենախոսության մեջ.

ա. առաջին անգամ փորձ է արվել, հենվելով Եվրամիության և նրա կառույցների բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերի և այլ նյութերի, ՀՀ-ի և ԵՄ-ի պաշտոնական ներկայացուցիչների հայտարարությունների և ելույթների վրա (որոնցից շատերը գիտական շրջանառության մեջ են դրվել) նորովի ներկայացնել ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերությունների կայացման հիմքերը և դրանց զարգացումը,

բ. ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունների մասին ՀՀ-ում հրատարակվել են աշխատություններ և հոդվածներ, սակայն դրանցում մանրամասն լուսաբանված չէ հարաբերությունների և համագործակցության զարգացման ընթացքը: Ամենևին չնսեմացնելով այդ աշխատությունների գիտական արժեքը՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ խնդրի մասին ավելի ծավալուն և ընդգրկուն պատկերացում կազմելու համար ավելի արդյունավետ է դիտարկել ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունները առանձին ոլորտներում: Աշխատությունը հնարավորություն է տալիս

ամբողջական պատկերացում կազմել ՀՀ-ԵՄ հարաբերությունների սկզբնավորման, զարգացումների, վերելքների և վայրէջքների վերաբերյալ,

գ. քննության են առնվել Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի որդեգրած քաղաքականությունը և դրանից բխող ծրագրերի նպատակաուղղվածությունը,

դ. ուսումնասիրվել և վերլուծվել է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության խնդիրը և ՀՀ-ի դերը այդ հարցում, հայ-թուրքական սահմանի բացման և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության չճանաչման հարցերը:

ե. համապարփակ ներկայացված է ՀՀ-ի պաշտոնական շրջանակների դիրքորոշումը ԵՄ-ի հետ հետագա համագործակցության մասին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության արդյունքում ձևավորված նյութը հնարավորություն է տալիս ըմբռնել ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել ՀՀ-ի եվրաինտեգրման գործընթացներով զբաղվող գերատեսչությունների աշխատանքներում, եվրոպական ուղղվածության հետևանքով ՀՀ-ում իրականացված վերափոխումների ուսումնասիրության նպատակով, ուսումնական ձեռնարկների կազմման, ինչպես նաև բուհերում տարբեր դասընթացների շրջանակներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմություն ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 3 հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են հանդիսացել պաշտոնական փաստաթղթերը, օրենքները, զեկույցները, արխիվային նյութերը, հայ և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, գիտական հոդվածները, ՀՀ-ի և ԵՄ-ի պաշտոնական ներկայացուցիչների ելույթները և հարցազրույցները, պարբերական մամուլը, պաշտոնական կայքերը:

Ատենախոսության մեջ օգտագործվել են ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման իրավական հիմքը կազմող հիմնական պայմանագրերը, հռչակագրերը, բանաձևերը, զեկույցները, ինչպես նաև ՀՀ պատմադիվանագիտական արխիվի փաստաթղթերը[1]: Դրանք հանդիսանալով սկզբնաղբյուրներ՝ ուսումնասիրողին անաչառ և օբյեկտիվ նյութ են մատուցում:

[1] Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, Official Journal, L 239, 09.09.1999,http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:21999A0909(01):EN:

Հետազոտության համար կարևոր նշանակություն են ունեցել հայ, ռուս և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ դերն է ունեցել հետազոտությանը առնչվող այս կամ այն խնդրի բացահայտման գործում:

ՀՀ-ի և ԵՄ-ի միջև հարաբերությունների սկզբնավորման, համագործակցության բնագավառների և հիմնական ուղղությունների, զարգացման հեռանկարների ուսումնասիրության նպատակով կարևոր նշանակություն են ունեցել հայազգի հեղինակների Ա. Շ. Հարությունյանի[2], Գ. Մ. Քեռյանի[3], Ա. Սարգսյանի[4] և այլոց աշխատությունները: Հատկանշական է, որ հեղինակները անդրադարձել են ոչ միայն ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերություններին, այլև ներկայացրել են եվրոպական ինտեգրման պատմական, իրավական և տնտեսական նշանակությունը, ԵՄ կառույցների գործառույթները և իրականացրած քաղաքականությունը: ԵՄ-ը ձևավորվելով սկզբնական շրջանում որպես տնտեսական միավորում՝ ժամանակի ընթացքում զբաղեցրեց իր ուրույն տեղը նաև իրավունքի, ժողովրդավարության արժեքների տարածման գործում:

Գ. Մ. Քեռյանն իր աշխատության մեջ ներկայացրել է Խորհրդային Միության փլուզումից հետո հարավկովկասյան տարածաշրջանում ԵՄ-ի վարած քաղաքականությունը, այն քաղաքական և տնտեսական ծրագրերը, որոնք առաջ են քաշվել ԵՄ-ի կողմից Հարավային Կովկասի նորանկախ երեք հանրապետությունների համար: Աշխատանքում արտացոլված են նաև ԵՄ-ի շահերի բախումը ՌԴ-ի, ԱՄՆ-ի հետ, նրանց իրականացրած քաղաքականությունը տարածաշրջանի երկրներում: Վերլուծության է ենթարկվում հայ հասարակության

HTML; Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001, http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf; European Parliament, Delegation to the parliamentary cooperation committees EU-Armenia, EU-Azerbaijan and EU-Georgia, EUR/TB/ES, NT/53 5302EN.doc, 13 May, 2004, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/history2004_southcaus_en.pdf; EU/Armenia Action plan, http://ec.europa.eu/world/enp/pdf/actionplans/armeniaenpapfinalen.pdf; Euromed report, Presidency conclusions Brussels European Council 16/17 October 2003, Issue No 67, 20 October, 2003, http://www.euromedi.org/inglese/home/partenariato/report/report/euromedreport67en.pdf; Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit Prague, 8435/09, (Presse 78), Brussels, 7 May, 2009, http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/eastern_partnership/documents/prague_summit_declaration_en.pdf; 'Implementation of the European Neighbourhood Policy in 2007' Progress Report Armenia, SEC(2008)392, Brussels, 3 April, http://ec.europa.eu/world/enp/ pdf/progress2008/sec08_ 392_en.pdf, ՀՀ պատմադիվանագիտական արխիվ. ցուցակներ 2, 3, 6, 7, 10, գործեր 38, 67, 80, 81, 180, 184, 191:

[2] Հարությունյան Ա. Շ., Եվրոպական միության իրավունքի հիմունքները, Երևան, <<Տիգրան Մեծ>>, 2011:

[3] Քեռյան Գ. Մ., Սիմոնյան Հ. Ս., Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2005:

[4] Սարգսյան Ա., Եվրոպական Միության ինստիտուտներ և ընթացակարգեր, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009:

վերաբերմունքը ԵՄ-ի նկատմամբ: Աշխատանքը չնայած հակիրճ է և իրադարձությունները ներկայացված են մինչև 2005 թ., այդուհանդերձ այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ՀՀ-ԵՄ հարաբերությունների սկզբնավորման և ԵՄ-ի ծրագրերում ՀՀ-ի ներգրավածության մասին:

Ա. Շ. Հարությունյանի աշխատությունում իրավական տեսանկյունից լուսաբանվել է ԵՄ-ի ստեղծումը, ընդլայնումը, Լիսաբոնի պայմանագրով նախատեսված առանցքային փոփոխությունները և ԵՄ-ի քաղաքական ընթացակարգերը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ հարաբերությունների և մասնավորապես Գործընկերության ու համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները: Աշխատությունում շատ են խրթին մտքերը, անգլերենից հայերեն շարահյուսական ոչ ճիշտ թարգմանությունները, զգացվում է վերլուծական մտքի պակաս: Այս ամենով հանդերձ աշխատանքը նշանակալից է նրանով, որ հայերեն լեզվով փորձ է արվել անդրադառնալ ԵՄ-ի պատմությանը և իրավունքին:

Հարավային Կովկասում ԵՄ-ի հիմնական շահերը, առկա խոչընդոտները և տարածաշրջանում գերտերությունների մրցակցության պատճառները հետազոտելու համար օգտակար են եղել Զ. Բժեզինսկու[5], Կ. Ս. Գաջիևի[6], Վ. Ա. Հուսեյնովի[7], Ս. Մարկեդոնովի[8], Մ. Հաասի[9] և այլոց աշխատությունները: Զ. Բժեզինսկին <<Մեծ շախմատային տախտակ>> աշխատությունում վերլուծության է ենթարկում հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական զարգացումները և տերությունների հիմնական շահերը տարբեր տարածաշրջանների նկատմամբ: Անդրադառնալով Հարավային Կովկասին՝ որպես Արևմուտքը Արևելքին կապող հիմնական օղակի, Զ. Բժեզինսկին կարևորում է Հարավային Կովկասի աշխարհագրական ուրույն դիրքը, ինչի հետևանքով այն միշտ էլ եղել է միջազգային հարաբերությունների հիմնական դերակատարների ուշադրության կենտրոնում:

Հայտնի քաղաքագետ Կ. Ս. Գաջիևը համապարփակ ներկայացնելով Հարավային Կովկասի նշանակությունը՝ հատուկ ուշադրություն է դարձնում տարածաշրջանի պատմական զարգացման, տարբեր քաղաքակրթությունների

---

[5]Бжезинский З., Великая шахматная доска (Господство Америки и его геостратегические императивы), Москва, <<Международные отношения>>, 1998.

[6] Гаджиев К.С., Геополитика Кавказа, Москва, <<Международные отношения>>, 2003.

[7] Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы). отв. ред. Гусейнов В.А., Москва, Красная звезда, 2008.

[8] Маркедонов С., Европеизация Кавказа, 28.04.2006, http://politcom.ru/2632.html.

[9] Haas, Marcel de, Geo-strategy in the South Caucasus; Power play and energy security of states and organisations, The Hague, Netherlands Institute of International Relations Clingendael, November 2006,http://www.centralasia-southcaucasus.com/pdf/061100%20Clingendael%20-%20Geostrategy%20in%20the%20South%20Caucasus.pdf.

կենտրոնում գտնվելու և որոշ այլ հիմնախնդիրների վրա: Դրանք անուղղակիորեն իրենց ազդեցություն են ունեցել հարավկովկասյան նորանկախ պետությունների քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալական կյանքի վրա:

Հարավային Կովկասը մշտապես եղել է գերտերությունների ուշադրության կենտրոնում՝ կապված աշխարհագրական ուրույն դիրքի և որոշ այլ առանձնահատկությունների հետ, ինչը փաստում է նշված հեղինակներից յուրաքանչյուրը: Չնայած այդ հանգամանքին՝ նրանք իրենց տեսակետն են ներկայացնում տարածաշրջանում արտաքին և ներքին դերակատարների զբաղեցրած դերի ու նշանակության մասին: Հեղինակների մեծ մասը Հարավային Կովկասում կարևորում է երկու հիմնական գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի նշանակությունը՝ այդ կերպ թերագնահատելով ԵՄ-ի ներուժը տարածաշրջանում գերակա դիրքեր զբաղեցնելու տեսանկյունից:

21-րդ դարում ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքականության, հարևանների, Ռուսաստանի, արևմտյան երկրների և միջազգային կառույցների հետ համագործակցության մասին հիմնարար աշխատություններից հատկապես կարևորում ենք Ն. Հովհաննիսյանի[10], Է. Գ. Մինասյանի[11], Լ. Շիրինյանի[12], Ե. Մ. Կոժոկինի[13] տեսական աշխատանքները, որտեղ ներկայացվում են անկախությունից ի վեր ՀՀ-ի առջև ծառացած արտաքին քաղաքական հիմնախնդիրները և արծարծվում դրանց հնարավոր լուծման քայլերը: Լ. Շիրինյանը <<Նոր աշխարհակարգը և Հայաստանը>> աշխատության մեջ անդրադառնում է ՀՀ-ի աշխարհաքաղաքական դերին, Հարավային Կովկասում խոշոր ուժային կենտրոնների դերակատարությանը: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը խախտում է դեպքերի ժամանակագրական ընթացքը՝ այդուհանդերձ այն կարևոր է ՀՀ-ի արտաքին քաղաքականությունն ուսումնասիրելու համար:

Նիկոլայ Հովհաննիսյանի <<Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում>> աշխատությունում ներկայացված է ՀՀ արտաքին քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Նշվում են արտաքին քաղաքական մարտահրավերները, որ առկա են ՀՀ-ի քաղաքական օրակարգում: Անդրադարձ է կատարվում ՀՀ-ի և հարևանների, ինչպես նաև ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ հարաբերություններին:

---

[10] Hovhannisyan N., The foreign policy of the Republic of Armenia in the Transcaucasian-Middle Eastern geopolitical region, Yerevan, Noyan Tapan, 1998.

[11] Մինասյան Է. Գ., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2003:

[12] Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Երևան, <<Լուսակն>> հրատարակչություն, 2006:

[13] Армения: проблемы независимого развития, под общ. ред. Е. М. Кожокина, Москва, Российский институт стратегических исследований, 1998.

ՀՀ-ի համար առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող Լեռնային Ղարաբաղի և տարածաշրջանային հակամարտությունների վերաբերյալ ԵՄ-ի վարած քաղաքականությունը և դրանց պատճառները լուսաբանված են Դ. Լինչի[14], Մ. Քամբեքի և Ս. Ղազարյանի[15], Ս. Մինասյանի[16] ու այլոց աշխատանք-ներում: Նրանք հիմնականում մատնանշում են, որ թեև ԵՄ-ը փորձում է որոշակի դերակատարություն ստանձնել Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման գործընթացում, այդուհանդերձ դա նրան մասնակի է հաջողվում, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Մ. Քամբեքի խմբագրությամբ <<Եվրոպայի հաջորդ անխուսափելի պատերազմը Լեռնային Ղարաբաղում>> աշխատությունը անդրադառնում է ԵՄ-ի ներգրավվածությանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, նրա շահերին Հարավային Կովկասում նաև ԵՄ-ի մրցակցությանը ՌԴ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում:

ԵՄ-ին՝ այդ վերազգային կառույցին, անդամակցել ձգտող մեր արևմտյան հարևան Թուրքիայի հարաբերությունները որոշակի կերպով արտացոլված են Դ. Կռալի[17] և այլ հեղինակների աշխատանքներում, որտեղ հիմնականում նշվում են այն պատճառները, որոնք անջրպետ են ստեղծում դեպի ԵՄ-ը Թուրքիայի անդամակցության ճանապարհին: Դ.Կռալի <<Բուլղարիա, Ռումինիա...ո՞վ է հաջորդը>> աշխատության մեջ լուսաբանվել է ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների զարգացումները և հեռանկարները: Հեղինակը անդրադարձել է Թուրքիայի՝ ԵՄ-ի անդամ դառնալու ճանապարհին առկա խոչընդոտներին, այն դրական և բացասական հետևանքներին, որ կառաջանան ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության դեպքում: Այստեղ ոչ շատ ծավալուն խոսվում է նաև Թուրքիայի՝ ԵՄ-ի անդամ դառնալու ճանապարհին խոչընդոտ համարվող Հայոց ցեղասպանության մասին: Այդ խնդրում ԵՄ-ի պաշտոնական դիրքորոշումը հասկանալու համար կարևորել ենք նաև որոշ փաստաթղթեր, ինչպես նաև՝ եվրոպական պաշտոնյաների կարծիքներ[18]: Դրանց ուսումնա-

---

[14] The South Caucasus: A challenge for the EU, Chaillot Paper , N°65, Institute for security studies, European Union, Paris, 01 December, 2003, edited by Dov Lynch, http://www.iss.europa.eu/uploads/media/cp065e.pdf.

[15] Europe's next avoidable war: Nagorno-Karabakh, edited by Michael Kambeck and Sargis Ghazaryan, New York, Palgrave Macmillan, 2013.

[16] Минасян С., Роль ЕС в урегулировании конфликтов на Южном Кавказе: европейские ценности и геополитика на пороге «Восточного партнерства», http://www.noravank.am/rus/articles/detail.php? element_ id=2710.

[17] David Král, Bulgaria, Romania... and who next? Perspectives of further EU enlargement as seen from the new member states and EU hopefuls, Prague, EUROPEUM Institute for European Policy, 2007.

[18] Resolution on a political solution to the Armenian question, Official journal of the European Communities, No C 190, 18 June, 1987, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_

սիրությունը համադրելով գոյություն ունեցող աշխատությունների հետ՝ ամբողջացրել ենք խնդրի վերաբերյալ մեր պատկերացումները, որոնք թույլ են տվել իրատեսական մոտեցում ցուցաբերել:

Հատկապես կարևոր է ընդգծել ՀՀ արտաքին գործերի նախարարության, ԵՄ-ի, ԵՄ հանձնաժողովի, ՀՀ-ում ԵՄ-ի պատվիրակության, ՀՀ նախագահի և այլ պաշտոնական կայքերի[19] նշանակությունը, որոնք հետազոտողին հնարավորություն են տալիս ուսումնասիրել պայմանագրերի, համաձայնագրերի տեքստերը, ՀՀ-ի և ԵՄ-ի պաշտոնական ներկայացուցիչների մամլո հաղորդագրությունները, հայտարարությունները, ստանալ տեղեկություններ իրականացվող ծրագրերի մասին:

ՀՀ-ԵՄ համագործակցության ձևավորման գործընթացի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար օգտակար են եղել հայազգի և եվրոպական պաշտոնյաների ելույթները և հայտարարությունները՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանի, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի, ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Աշտոնի, Եվրահանձնաժողովի նախագահներ Ժոզե Մանուել Բարոզուի, Ռոմանո Պրոդիի, Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Բենիտա Ֆեռերո Վալդների, ԵՄ ընդլայնման քաղաքականության ու հարևանության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի, Եվրախորհրդարանի նախագահ Եժի Բյուզեկի, Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչներ Պիտեր Սեմնեբիի, Հեյկի Տալվատիեի և այլոց[20]: Ըստ

---

meeting/resolutions/19870720.pdf; Report on the communication from the Commission to the Council and the European Parliament on the European Union's relations with the South Caucasus, under the partnership and cooperation agreements (COM(1999)272–C5-0116/1999–1999/2119 (COS)), European Parliament final, A5-0028/2002, 28 January, 2002, http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?Pub Ref=-//EP//NONSGML+REPORT+A5-2002-0028+0+DOC+PDF+V0//EN; Turkey entry 'would destroy EU', 8 November, 2002, http://news.bbc.co.uk/2/hi/europe/2420697.stm.

[19] ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ http://www.mfa.am/hy/, Եվրոպական Միության պաշտոնական կայք՝ http://europa.eu/; Եվրամիության հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://ec.europa.eu/; Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության պաշտոնական կայք՝ http://eeas.europa.eu/delegations/ armenia/index_en.htm; ՀՀ նախագահի պաշտոնական կայք՝ http://www.president.am/hy/.

[20] Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության գագաթնաժողովում, 07.05.2009, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/05/07/news-40/; Մենք ամեն ինչ կանենք՝ բազմավեկտոր քաղաքականություն վարելու համար. Ա. Զաքարյանի ելույթը Վիլնյուսում, 28.11.13, http://www.tert.am/am/news/2013/11/28/artak-zaqaryan-vilnyus/; Կմշակվի Հայաստան-Եվրամիություն 2014-2015 թթ. գործողությունների նոր ծրագիր, 06 դեկտեմբեր, 2013, http://m.news.am/arm/news/184222.html; Քեթրին Էշթոն, Շնորհակալ եմ նրանցից, ով նպաստում է Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացմանը, 16 նոյեմբերի, 2011, http://www.panarmenian. net/arm/news/84027/; The Eastern Partnership–an ambitious new

էության, միջազգային իրավունքի երկու սուբյեկտների՝ ՀՀ-ի և ԵՄ-ի քաղաքականության անմիջական կերտողների արտահայտած տեսակետների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում անկողմնակալ վերլուծության ենթարկել տեղի ունեցող իրադարձությունները և հանգել համապատասխան եզրակացությունների, որոնք ներկայացված են հետազոտության վերջում:

Ատենախոսության տեսական հիմքը համալրվել է նաև պարբերական մամուլի[21] և համացանցային նյութերով[22]: ԶԼՄ-ների դերը միշտ էլ կարևոր նշանակություն է ունեցել այս կամ այն իրադարձության մասին տեղեկություն ստանալու համար, հատկապես եթե դա վերաբերում է երկկողմ հարաբերություն-ներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վեց ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

---

chapter in the EU's relations with its Eastern neighbours, European Commission-IP/08/1858, 03.12.2008, http://europa.eu/rapid/press-release_IP-08-1858_en.htm?locale=en; Ըստ Ռ.Պրոդիի, ԵՄ-ի նոր հարևանության ծրագրի միջոցով եվրոպական կառույցները կապվում են տարածաշրջանի հետ, 20 սեպտեմբեր, 2004, http://armenpress.am/arm/print/406921/; Benita Ferrero-Waldner European Commissioner for External Relations and European Neighbourhood Policy, Black Sea Synergy: the EU's approach to the Black Sea region, Black Sea Synergy Ministerial Meeting Kiev, 14 February, 2008, European Commission-SPEECH/08/77, 14.02.2008, http://europa.eu/rapid/press-release_SPEECH-08-77_en.htm?locale=en; Թամրազյան Հր., Ֆյուլե. Եթե վստահություն լինի, շատ բանի կարելի է հասնել, 14.09.2013, http://www.azatutyun.am/content/article/25105723.html; Եժի Բուզեկ. Հայաստանը Եվրամիության համար վճռորոշ հարևան է, 18 մայիս, 2011, http://armenpress.am/arm/print/652826/; Питер Семнеби: "Европейский союз осознал, что у ЕС есть собственные интересы на Южном Кавказе, 22 октября, 2011, http://www.vestikavkaza.ru/news/44978.html; Ղարաբաղի և Կոսովոյի հակամար-տությունները չի կարելի կարգավորել նույն մեթոդներով, 20 փետրվարի, 2006, http://www.panarmenian.net/arm/news/16470/.

[21] <<Ազգ>>, 2001, 2002, 2004, № 87, 105, 162, 226, <<Հայաստանի Հանրապետություն>>, 2007, 2010, 2011, 2012, 2013, № 59, 79, 98, 121, 156, 223, 224:

[22] Դանիելյան Կ., Ղարաբաղյան հիմնախնդրի հանդեպ կտրուկ փոփոխությունների նախանշաններ չկան, Հայաստանը՝ բարձրաստիճան հանդիպումների պարունակներում, «Ազգ» օրաթերթ, № 181, 07.10.2003, http://www.azg.am/AM/print/2003100704; Բրյուսելում կայացավ ՀՀ-ԵՄ համագործակցության խորհրդի հանդիպումը, 1 հոկտեմբեր, 2002, http://armenpress.am/arm/news/374982/bryuselum-kayacav-hh-em-hamagortsakcutyan.html; Եվրահանձնաժողովը Հայաստանին առաջարկում է 100 մլն եվրո մակրո-ֆինանսական օգնություն տրամադրել, 16 հոկտեմբեր, 2009, http://armenpress.am/arm/print/573501/;Южный Кавказ-на задворках внешней политики ЕС, 09.07.10, http://mx1.warandpeace.ru/ru/news/view/48827/; Council appoints an EU Special Representative for the South Caucasus, European Council, PRES/03/196, Brussels, 7 July, 2003, http://europa.eu/ rapid/press-release_PRES-03-196_en.htm; EU-Armenia cooperation council seventh meeting, 15133/06, Presse 317, Brussels, 14 November, 2006, http://www.consilium. europa.eu/uedocs/cms_data/docs/press data/en/er/91688.pdf.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխ՝ <<ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ>>, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ <<Հարավային Կովկասի նշանակությունը Եվրոպական Միության արտաքին քաղաքականությունում>>, ամփոփ ներկայացված են ընդլայնումից հետո ԵՄ-ի համար Հարավային Կովկասի նշանակությունը, նրա իրականացրած քաղաքականությունը և ծրագրերը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում անկախացած երեք հանրապետություններն իրենց վրա բևեռեցին ԵՄ-ի ուշադրությունը: Հարավային Կովկասը գտնվելով ԵՄ-ի սահմանների մոտ՝ առանձնանում էր իր տնտեսական ծանր դրությամբ և հակամարտություններով:

ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը ուղղված էր փորձ կատարելու այդ հակամարտություններում ակտիվ ներգրավմանը և դրանց վերացմանը: Հարավկովկասյան երեք հանրապետությունները ֆինանսական, տնտեսական, մարդասիրական օգնություն ստացան ԵՄ-ից: ԵՄ-ը շահագրգռված էր Հարավային Կովկասի կայունությամբ և զարգացմամբ: Հարավային Կովկասը ԵՄ-ի համար հիանալի հենակետ էր Կասպյան ավազան, Կենտրոնական Ասիա և Իրան ներթափանցելու, էներգետիկ կախվածությունը ՌԴ-ից թուլացնելու համար: ԵՄ-ի համար կարևոր էր Հարավային Կովկասը իր արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտի մեջ ընդգրկելը:

Դրված խնդիրները Հարավային Կովկասում լուծելու համար, ԵՄ-ը դեռևս չուներ այն քաղաքական ու ռազմական լծակները, որոնք անհրաժեշտ էին իր առաջնահերթությունը այս տարածաշրջանում ամրապնդելու համար: Նրա առաջ քաշած էներգետիկ և հաղորդակցության ծրագրերը ամբողջովին չէին կարող իրականանալ՝ տարածաշրջանում առկա լարվածության և փակ սահմանների առկայության պատճառով:

Երկրորդ ենթագլխում՝ <<Եվրոպական Միության շահերը Հարավային Կովկասում>>, վերլուծության է ենթարկվում Հարավային Կովկասում ԵՄ-ի վարած տարածաշրջանային քաղաքականությունը և նրանում առկա խոչընդոտները:

Փորձելով գործուն ներգրավվածություն ունենալ Հարավկովկասյան տարածաշրջանում՝ ԵՄ-ի քաղաքականությունը բախվում է Հարավային Կովկասում իրենց դիրքերն ամրապնդել փորձող ԱՄՆ-ի և ՌԴ-ի շահերի հետ: ՌԴ-ը Հարավային Կովկասը ավանդաբար համարելով իր ազդեցության գոտի՝ փորձում է կանխել հարավկովկասյան երկրների եվրոպական ինտեգրման

քաղաքականությունը: Ըմբռնելով ԵՄ-ի էներգետիկ անվտանգությունը ապահովելու քաղաքականությունը՝ ՌԴ-ը իր ռազմական ներկայությամբ փորձում է կանխել ԵՄ-ի ծավալումը տարածաշրջանում: ԵՄ-ի հաղորդակցության և էներգետիկ ծրագրերը նպատակ ունեին շրջանցելու ՌԴ-ը:

Հարավկովկասյան երեք հանրապետությունների արտաքին տարամետ քաղաքականությունը ավելի է խթանում ԵՄ-ի և ՌԴ-ի շահերի բախումը: Հարավային Կովկասում ԵՄ-ը բախվում է նաև ԱՄՆ-ի շահերի հետ: Եթե ԱՄՆ-ը շեշտը դնում է տարածաշրջանում ամրապնդվելու ռազմաքաղաքական գործոնի վրա, ապա ԵՄ-ը, զրկված լինելով ռազմական ուժից, շեշտը դնում է տնտեսական ներգրավվածության, հաղորդակցության խթանման վրա: Այս երեք խոշոր ուժային կենտրոնների շահերի բախումը տարբեր կերպ է ներազդում տարածաշրջանի երկրների վրա: Միայն կողմերի քաղաքական ըմբռնման և համագործակցության շնորհիվ է, որ հնարավոր է պահպանել խաղաղությունը և համագործակցությունը տարածաշրջանում:

Երկրորդ գլուխ՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ>>, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ <<Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության աջակցությունը Հայաստանին 1990-ական թվականներին>>, քննարկվում են Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՀ/ԵՄ) կողմից նորանկախ ՀՀ-ին ցուցաբերած աջակցության ծրագրերը և դրանց ուղղվածությունը:

ԵՀ/ԵՄ-ի հետ ՀՀ-ի կապերը ձևավորվեցին անկախություն ձեռք բերելուն զուգընթաց և հիմնվեցին համընդհանուր պատմության ու արժեքների, երկուստեք բարի կամքի դրսևորման ու պատրաստակամության վրա: ՀՀ-ը թեև աշխարհագրորեն գտնվում է Կովկասյան տարածաշրջանում Ասիայի և Եվրոպայի միջև, սակայն մշակութային և քաղաքական առումներով համարվում է եվրոպական քաղաքակրթության բաղկացուցիչ մաս: Հայաստանի և Եվրոպայի պատմական, քաղաքական և մշակութային առնչությունները ունեն դարերի պատմություն:

ՀՀ-ի և ԵՀ/ԵՄ-ի միջև անմիջական համագործակցությունը սկիզբ առավ 1992 թ. տեխնիկական օգնության՝ ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում: Որոշվեց, որ ԵՀ/ԵՄ-ը ՀՀ-ին պետք է օժանդակի այնպիսի կարևոր ոլորտներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ վերափոխումների իրականացման վրա և նպաստել շուկայական տնտեսության ու ժողովրդավարական հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: ԵՀ/ԵՄ-ը ՀՀ-ին աջակցել է մի շարք այլ ծրագրերի միջոցով ևս՝ Մարդասիրական օգնության (ECHO), Պարենային անվտանգության (Food security), Միջուկային

անվտանգության (Nuclear Safety), Բացառիկ ֆինանսական օժանդակության (Exceptional Financial Assistance) և այլն:

Այսպիսով, ԵՀ/ԵՄ-ը փաստորեն առաջիններից մեկն էր, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո օգնության ձեռք մեկնեց ՀՀ-ին: Ինչպես հայտնի է, Հայաստանի բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը ոչ մեկ անգամ է իր փրկության հույսը կապել Եվրոպայի հետ: Որոշ դեպքերում սպասումները արդարացված են եղել, սակայն ավելի հաճախ եղել են խոր հիասթափություններ:

Երկրորդ ենթագլխում՝<< Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության համագործակցության նպատակները>>, վերլուծվում են ՀՀ-ի և ԵՀ/ԵՄ-ի հարաբերությունները Գործընկերության և համագործակցության համաձայնագրի, միջխորհրդարանական հանդիպումների և քաղաքական երկխոսության համատեքստում:

1990-ական թվականներին ՀՀ-ԵՀ/ԵՄ երկկողմ հարաբերությունները ակտիվորեն ծավալվեցին ոչ միայն տեխնիկական օգնության, այլև քաղաքական երկխոսության շրջանակներում: ՀՀ-ԵՄ երկկողմանի հարաբերությունների զարգացման կարևոր փուլ հանդիսացավ ՀՀ ներկայացուցիչների մասնակցությունը Եվրոպայում Կայունության պակտի վեհաժողովի վերջնական աշխատանքներին: 1996 թ. մեկնարկեցին ՀՀ-Եվրախորհրդարան միջխորհրդարանական հանդիպում-ները: Քաղաքական հարաբերությունների առաջընթացի մասին են վկայում նաև ՀՀ-ում տեղի ունեցող նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԵՄ-ի կողմից ուղղարկված դիտորդական խմբերը:

1996 թ. ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում հարավկովկասյան երեք պետությունների ղեկավարների հանդիպման ժամանակ կնքվեցին Գործընկերության և Համագործակցության համաձայնագրեր (այսուհետ՝ ԳՀՀ): ԳՀՀ-ները, որոնք ուժի մեջ մտան 1999 թ. հուլիսի 1-ին նշանավորեցին ՀՀ-ԵՄ հարաբերությունների որակապես նոր փուլ: Համաձայնագիրը հիմք էր ստեղծում քաղաքական, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների, առևտրի և ներդրումների բնագավառում արդյունավետ երկխոսության համար, ինչպես նաև իր ուրույն դերը ուներ տարածաշրջանային համագործակցության ամրապնդման գործում, որը վտանգված էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ:

Այսպիսով, ԳՀՀ-ների ստորագրմամբ ՀՀ-ը պետք է իրականացներ համապատասխան վերափոխումներ քաղաքական, տնտեսական, իրավական, կրթական ոլորտներում, որոնց կատարումը իրապես հանգեցնելու էր ժողովրդավարական արժեքների վրա հիմնված պետականության կայացմանը: Չնայած այն հանգամանքին, որ ոչ բոլոր պարտավորությունները կատարվեցին, այնուհանդերձ ՀՀ-ԵՄ հարաբերությունների համար կարևոր նշյալ համաձայ-նագիրը դրական ազդեցություն ունեցավ ՀՀ-ի սոցիալ-տնտեսական կյանքի վրա:

Երրորդ գլուխ՝ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ>>, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ <<Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության փոխհարաբերությունները 2001-2008 թվականներին: Հայկական գործոնը Եվրամիություն-Թուրքիա հարաբերություններում>>, քննության են առնվում վերոնշված ժամանակահատվածում ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերություն-ների սերտացման գործընթացը, ձեռք բերված հաջողությունները և ԵՄ-ի դիրքորոշումը Թուրքիայի եվրաինտեգրման գործընթացի վերաբերյալ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների համատեքստում:

ՀՀ-ԵՀ/ԵՄ հարաբերությունների հաջող մեկնարկը պարարտ հող ստեղծեց երկկողմ համագործակցության հետագա ընդլայնման համար: Համագործակ-ցության շրջանակներն աստիճանաբար ընդլայնվում էին՝ ներառելով նորանոր բնագավառներ:

ԵՄ-ի շահագրգռությունը ՀՀ-ի զարգացմամբ արտացոլվեց 2001 թ. դեկտեմբերին կազմված Երկրի ռազմավարական փաստաթղթում: 2003 թ. կարևորելով Հարավային Կովկասի դերը արտաքին քաղաքականության մեջ՝ ԵՄ-ը իր հատուկ ներկայացուցիչը նշանակեց Հարավային Կովկասում: Այս նշանակումը նպատակ ուներ աջակցել ԵՄ-ը Խորհրդին Հարավային Կովկասում համարփակ քաղաքականություն մշակելու, հնարավոր նոր հակամարտությունները կանխարգելելու և սեղմ ժամկետներում փորձելու կարգավորել եղած հակամար-տությունները: ՀՀ-ԵՄ հարաբերություններում նոր էջ բացվեց 2004 թ. հունիսի 14-ին, երբ ՀՀ-ը ընդգրկվեց Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ԵՀՔ) մեջ: Ծրագիրը խրախուսելու էր բոլոր վերափոխումները, որոնք նպաստելու էին ՀՀ-ի սոցիալական և տնտեսական զարգացմանը և երկկողմանի հարաբերություններում չլուծված հարցերի կարգավորմանը: ԵՀՔ-ի շրջանակնե-րում կազմված Գործողությունների ծրագրերը սահմանելու էին այն գերակայու-թյունները, որոնց շուրջ յուրաքանչյուր երկրի հետ կնքվելու էր պայմանագիր: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ-ԵՄ-Թուրքիա հարաբերություններին, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության խնդրին և ՀՀ-ի նշանակությանը այդ հարցում: Հայ-թուրքական սահմանի փակ վիճակը, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ԵՄ-Թուրքիա հարաբերություններում շարունակում է շահարկվել եվրոպացի քաղաքական գործիչների կողմից: Չնայած այն հանգամանքին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը հստակ ձևակերպված նախապայման չէ Թուրքիայի անդամակ- ցությանը ԵՄ-ին, սակայն այն շարունակում է ճնշող ազդեցություն ունենալ Թուրքիայի եվրաինտեգրման քաղաքականության վրա:

Երկրորդ ենթագլուխ՝ <<Արևելյան գործընկերության իրագործման մարտահրավերները Հայաստանում>> , վերաբերում է ՀՀ-ի մասնակցության ԵՄ-ի

2009 թ. նոր նախաձեռնությանը, դրա հետ կապված ծրագրերի իրականացմանը և առկա խնդիրներին:

ԵՀՔ-ը թվում էր, թե արդեն կայացել էր որպես համապարփակ ծրագիր և կարող էր կյանքի կոչել ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև ծառացած մարտահրավերները, սակայն ԵՀՔ-ով նախատեսված միջոցառումները իրականացվեցին մասամբ: 2008 թ. օգոստոսի ռուս-վրացական <<հնգօրյա>> պատերազմից հետո ԵՄ-ը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ Արևելյան գործընկերության ծրագրով, որը պետք է վերացներ առաջացած բարդությունները և խթաներ հարաբերությունների հետագա զարգացումը Բելոռուսի, Ուկրաինայի, Մոլդովայի և Հարավային Կովկասի երեք երկրների հետ:

Արևելյան գործընկերությունը պետք է ամրապնդեր ՀՀ-ի և ԵՄ-ի միջև համագործակցությունը: Մաքսային միությանը, սակայն, անդամակցելու հայաստանյան իշխանությունների որոշումը հակասությունների տեղիք տվեց ԵՄ-ի նոր նախաձեռնության իրականացման խնդրում:

ՀՀ-ը անկախությունից ի վեր ելնելով իր աշխարհաքաղաքական դիրքի, անմիջական հարևանների հետ ունեցած հարաբերությունների առանձնահատկություններից՝ փորձել է վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն ՌԴ-ի և Արևմուտքի հետ: Չնայած Եվրոպայի հետ ունեցած պատմական ընդհանրություններին, ԵՄ-ի դերակատարությանը ՀՀ-ի ժողովրդավարական կառույցների կայացման գործընթացում, այդուհանդերձ հաշվի առնելով երկրի ռազմավարական անվտանգության ապահովման խնդիրները՝ ՀՀ-ն ընտրեց Մաքսային միությունը: Այնուամենայնիվ, ՀՀ-ը և ԵՄ-ը շարունակում են իրենց գործընկերային հարաբերությունների ընդլայնման ու խորացման գործընթացը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. 1991 թվականին ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան երեք երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, ձեռք էին բերել անկախություն: ԵՄ-ը փորձեց գործուն դերակատարություն ստանձնել հարավկովկասյան երկրներում, սակայն տարածաշրջանում բախվեց ԱՄՆ-ի և ՌԴ-ի աշխարհաքաղաքական շահերին: Վերջիններս Հարավային Կովկասում ունենալով սեփական շահեր՝ չեն պատրաստվում դրանք առանց պայքարի զիջել ԵՄ-ին: ԵՄ-ը ՌԴ-ից իր էներգետիկ կախվածությունը թուլացնելու համար փորձում է ստեղծել էներգառեսուրսների այլընտրանք: Հարավկովկասյան տարածաշրջանը այն ռազմավարական և տնտեսական հենադաշտն է, որ ԵՄ-ին թույլ է տալիս ներթափանցել Կասպյան ավազան և Կենտրոնական Ասիա: Հարավային Կովկասում իր նախագծերը և շահերը պաշտպանելու համար ԵՄ-ը բախվում է նաև ԱՄՆ-ի հետ, սակայն նրանք պայքարելով միևնույն մրցակցի դեմ՝ ՌԴ-ի, երբեմն միավորում են իրենց ուժերը: Լինելով տնտեսական հսկա, բայց ռազմական թզուկ՝ ԵՄ-ը

հարավկովկասյան տարածաշրջանում կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև: ՌԴ-ի աճող ազդեցությունը ԵՄ-ի դերի նվազման գլխավոր արգելքն է հարավկովկասյան տարածաշրջանում:

2. ԵՄ-ը, շահագրգռված լինելով իր ազդեցության ընդլայնմամբ Հարավային Կովկասում անցումային շրջանում գտնվող պետություններին օգնելու համար առաջարկեց իր տեխնիկական աջակցությունը, բացառություն չկազմեց նաև ՀՀ-ը: ԵՄ-ը մեծածավալ տնտեսական և հումանիտար օժանդակություն է ցուցաբերել ՀՀ-ին ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակում: ՀՀ-ը, 70 տարի զուրկ լինելով ինքնուրույնությունից և ձեռք բերելով անկախություն՝ հայտնվել էր դժվար կացության մեջ, ինչը որոշակիորեն մեղմվեց ԵՄ-ի ցուցաբերած օգնությամբ:

3. ԵՄ-ի առաջ քաշած Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը 1999 թվականին վավերացնելուց հետո ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունները թևակոխեցին համագործակցության լրջագույն փուլ: Հաճախակի դարձան հայ և եվրոպացի պաշտոնյաների փոխայցելությունները: ԵՄ-ը օժանդակեց ՀՀ-ում ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության բնագավառներում վերափոխումների իրականացմանը: Տնտեսական համագործակցությունից զատ, ԵՄ-ը փորձեց ներգրավվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի մեջ՝ կոչ անելով կողմերին հարցը լուծել խաղաղ բանակցային ճանապարհով: ԵՄ-ին ձեռնտու է խաղաղ և զարգացող տարածաշրջան՝ իր տնտեսական նախագծերը իրականացնելու համար:

4. 1950-ական թվականներից եվրաինտեգրման գաղափարով տառապող մեր հարևան Թուրքիայի ճանապարհին <<քրիստոնեական ակումբ>> համարվող ԵՄ-ի կողմից ստեղծվում են տարաբնույթ խոչընդոտներ, որոնցից մեկն էլ հայ-թուրքական փակ սահման է: Եվրոպան այս անգամ էլ հավատարիմ մնալով իր բազմադարյա քաղաքականությանը՝ շահարկում է հայկական գործոնը ի շահ իրեն: Իհարկե, ասվածը չի նշանակում, որ մենք կասկածի ենք ենթարկում ԵՄ-ի դիրքորոշումը հայ-թուրքական սահմանը բացելու վերաբերյալ, սակայն ակնհայտ է, որ ԵՄ-ին Թուրքիայի ինտեգրման համար առկա են այլ կարևոր գործոններ, և չի բացառվում, որ դրանց վերացման դեպքում ԵՄ-ը անտեսելով Հայոց ցեղասպանության չճանաչման, հայ-թուրքական սահմանի փակ լինելու հանգամանքը՝ Թուրքիային կընդունի եվրոպական ընտանիք:

5. 2004 թվականին ԵՄ-ը առաջ քաշեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որում ներգրավվեց նաև ՀՀ-ը: Հարևանության ծրագրով կողմերը պայմանավորվեցին շարունակել համագործակցությունը բազմաբնույթ բնագավառներում: Կազմվեց Գործողությունների ծրագիր՝ նկատի առնելով երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակը: ԵՄ-ի Հարևանության ծրագրով

ստանձնած պարտավորությունները, ՀՀ-ը, չնայած առկա խնդիրներին, մեծ մասամբ կատարեց սահմանված ժամկետներում:

6. 2008 թվականին ԵՄ-ը առաջարկեց մի նոր նախագիծ՝ Արևելյան գործընկերությունը, որում ի տարբերություն ԵՀՔ-ի, ներգրավվեցին միայն վեց պետություններ՝ Բելոռուսը, Մոլդովան, Ուկրաինան և հարավկովկասյան 3 հանրապետությունները: Այդ նախագծի գլխավոր նպատակներից էր անդամ երկրների տնտեսական միավորումը ԵՄ-ի հետ: Հայկական իշխանությունները շահագրգռված լինելով իր գլխավոր տնտեսական գործընկերներից մեկի՝ ԵՄ-ի հետ ավելի սերտացնելու հարաբերությունները, ակտիվորեն բանակցություններ էր վարում ասոցացման համաձայնագիր կնքելու շուրջ, քանզի այն ճանապարհ էր հարթում գործընկերների միջև ազատ առևտրի գոտու ստեղծման համար:

7. Թե՛ Գործընկերության և համագործակցության, թե՛ Եվրոպական հարևանության և թե՛ Արևելյան գործընկերության նախագծերը նպաստեցին ՀՀ-ի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, առաջընթաց գրանցեցին ՀՀ պետականության ամրապնդման գործում:

8. Այդուհանդերձ, այդ նախագծերը չէին ապահովում ՀՀ-ի ռազմական անվտանգությունը: Բացի հռչակագրային հայտարություններից՝ ԵՄ-ը գործնական քայլեր չէր կատարում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում՝ ամեն ինչ թողնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի տրամադրությանը:

9. ՀՀ-ը հաշվի առնելով իր առջև հառնած գլխավոր խնդիրները և ազգային անվտանգությանը սպառնացող հիմնական մարտահրավերները՝ որոշում կայացրեց ԵՄ-ի հետ հարաբերությունների պահպանմանը զուգահեռ՝ անդամակցել Մաքսային միությանը, որի հիմնադիր երկրներից է իր ռազմավարական գործընկերը՝ ՌԴ-ն:

10. ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունները 1992-2013 թվականների ընթացքում ունեցան և՛ վերելքներ և՛ վայրէջքներ, ինչն թերևս հանդիսացավ այն ամուր հիմքը, որի վրա կառուցվեց երկուստեք փոխշահավետ համագործակցություն, որը չնայած առկա խոչընդոտներին՝ շարունակում է բարեհաջող զարգանալ: Համագործակցություն, որն իր ուրույն տեղն է զբաղեցնում ՀՀ-ի նորագույն պատմության մեջ՝ նկատի առնելով ԵՄ-ի դրական ներգործությունը ՀՀ-ում ժողովրդավարական կառույցների կայացման և ամրապնդման, տարաբնույթ ոլորտներում իրականացված վերափոխումների գործընթացներում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Թուրքիա-Եվրոպական Միություն հարաբերությունների զարգացումը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան, 2013, էջ 223-229:

2. Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Եվրոպական Միության, հարևան երկրների ու ԱՄՆ-ի հետ, «Ակունք» (Գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1 (10), Երևան, 2014, էջ 76-82:

3. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների/Եվրոպական Միության համագործակցության սկզբնավորումը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Ա, Երևան, 2014, էջ 212-224:

Хачикян Арман Ашотович

Отношения Республики Армения и Европейского Союза в 1992-2013 годах

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении"

Защита состоится 30-го сентября 2014 г. в 14 ^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

Резюме

Основной задачей диссертационного исследования является всестороне и обоснованно представить двусторонние отношения между Республикой Армения (РА) и Европейским Союзом (ЕС) в 1992-2013 гг., определить их значение для обеих сторон, а также выявить существующие препятствия. Диссертация состоит из введения, трех глав, выводов и списка использованной литературы.

Во введении обоснована актуальность данного исследования, представлены основные цели и задачи, дано краткое описание использованной литературы, теоретическое и практическое значение, а также методология исследования.

Первая глава "Расширение Европейского Союза и политика на Южном Кавказе" посвящена значению Южного Кавказа для ЕС после расширения и политике по отношению к странам региона. После распада Советского Союза и образования на территории Южного Кавказа трех независимых государств, регион стал предметом внимания ЕС. Впоследствие расширения ЕС 2004 и 2007 годах его заинтересовность к Южному Кавказу во много раз возросла, где урегулирование конфликтов, сохранения мира и статус-кво имеет большое значение, что объясняется важным геополитическим значением региона. Следует отметить, что ЕС в лице США и России в регионе Южного Кавказа имеет серьезных соперников, которые пытаются подчинить себе регион. Тем не менее, ЕС стремится играть активную роль на Южном Кавказе, принимает активное участие в транспортных проектах и развитие энергетических инфраструктур региона, сотрудничает с Арменией, Грузией и Азербайджаном в рамках разных программ.

ЕС в своей политики к странам Южного Кавказа главный акцент делает на социально-экономической сфере, кроме этого тесно сотрудничает в рамках политики Европейского соседства и Восточного партнерства.

Во второй главе **«Предпосылки развития отношений между Республикой Армения и Европейским сообществом/Европейским Союзом»** представлены история

возникновения, развития двустороннего сотрудничества между РА и ЕС, а также основные цели сторон.

Параллельно с приобретением независимости РА начала развивать отношения с ЕС. В начальном этапе отношения между РА и ЕС развивались в рамках программы технической помощи ТАСИС, посредством которой РА получала из ЕС гуманитарную и финансовую помощь. ЕС содействовал РА в процессе осуществления реформ, направленных на становление в стране демократического общества, развитии экономики, укрепления институтов государственного управления, защите прав человека и фундаментальных свобод.

Ключевым значением в развитии двусторонних отношений имеет Соглашение о партнёрстве и сотрудничестве (СПС) между РА и ЕС 1996 г., которое заложило прочный фундамент для развития диалога сторон по политическим, экономическим, культурным вопросам. Соглашение 1996 г. является документом комплексного характера и предусматривает сотрудничество сторон в различных областях жизнедеятельности. Несмотря на то, что не все обязательства были реализованы со стороны РА, но СПС имело значительную роль для установления более тесных связей между РА и ЕС.

В третьей главе **«Дальнейшие расширение отношений между Республикой Армения и Европейским Союзом»** рассматриваются области двустороннего сотрудничества, намеченный прогресс и попытки преодоления существующих вызовов.

Успешное начало отношений между РА и ЕС создало прочную основу для дальнейшего расширения двустороннего сотрудничества. Качественное изменение в двусторонних отношений между РА и ЕС стало включение РА в Европейскую политику соседства (ЕПС) 14 июня 2004 года. В рамках ЕПС РА были представлены новые возможности более расширить сотрудничество с ЕС в областях политики, экономики, безопасности, культуры и т.д..

В двусторонних отношениях между РА и ЕС особое значение имеют вопросы связанные с неурегулированностью армяно-турецких отношений, закрытой армяно-турецкой границей, непризнанием со стороны Турции Геноцида армян. Все эти вопросы непосредственно влияют на вступление Турции в ЕС.

2008 г. ЕС объявила про свою новую инициативу, которая известна как Восточное партнерство, а 7 мая 2009 года в Праге состоялось его официальное учреждение. Восточное партнерство должно было укрепить сотрудничество между РА и ЕС, но решение армянской власти вступить в Таможенный союз породило некоторые противоречия связанные с реализаций целей Восточного партнерства. Несмотря на это, РА и ЕС продолжают свое тесное сотрудничество в разных областях.

В заключение изложены основные итоги и выводы исследования.

Khachikyan Arman Ashot

Relations of the Republic of Armenia and the European Union during 1992-2013 period

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on the September of 30th, 2014, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

Summary

The primary target of the dissertation research is comprehensive and reasonably present bilateral relations between the Republic of Armenia and the European Union in the years 1992-2013 to determine their importance for both sides, as well as to identify existing obstacles. The thesis consists of the introduction, three chapters, summary and the list of the used sources and literature.

The first chapter -" The expansion of the European Union and the South Caucasus policy" is devoted to the value of the South Caucasus for the EU after the enlargement policy towards the countries of the region. After the collapse of the Soviet Union and the formation of the South Caucasus three independent states, the region has become the subject of attention of the European Union. Subsequently EU enlargement in 2004 and 2007 of the interested him in the South Caucasus has increased many times, where the settlement of conflicts and maintaining peace and the status quo is of great importance that explains the geopolitical importance of the region. It should be noted that the European Union, represented by the U.S. and Russia in the South Caucasus region has serious rivals, who are trying to subjugate the region. Nevertheless, the EU seek to play an active role in the South Caucasus, has been actively involved in transport projects and the development of energy infrastructure in the region, cooperating with Armenia, Georgia and Azerbaijan in the framework of different programs.

EU in its policy towards the South Caucasus main emphasis on the socio-economic sphere, besides working closely within the framework of the European Neighbourhood Policy and the Eastern Partnership.

In the second chapter-"Preconditions for the development of relations between Armenia and the European Community/European Union" presents the history of the origin, development of bilateral cooperation between Armenia and the European Union, as well as the main objectives of the parties.

In parallel with the acquisition of independence, the Republic of Armenia began to develop relations with the European Union. In the initial stage of relations between

Armenia and the EU have developed within the TACIS technical assistance program through which Armenia received from the EU humanitarian and financial assistance. EU to assist Armenia in the implementation of reforms aimed at the formation of the country's democratic society, economic development, strengthening institutions of governance, human rights and fundamental freedoms.

Key importance in the development of bilateral relations is the Partnership and Cooperation Agreement (PCA) between the Republic of Armenia and the European Union in 1996, which laid a solid foundation for the development of dialogue between the parties on political, economic, cultural issues. 1996 agreement is a comprehensive document and provides for cooperation between the parties in various areas of life. 1996 agreement is a comprehensive document and provides the parties' cooperation in various fields of life. Despite the fact that not all commitments have been implemented by Armenia, but PCA had a significant role to establish closer ties between Armenia and the European Union.

In the third chapter-"Further expansion of relations between Armenia and the European Union" addressing areas of bilateral cooperation, scheduled progress and attempts to overcome existing challenges.

Successful start of relations between Armenia and the EU has created a solid foundation for further expansion of bilateral cooperation. Qualitative change in relations between Armenia and the European Union has been the inclusion of Armenia in the European Neighbourhood Policy (ENP) June 14, 2004. In ENP Armenia were given more opportunities to expand cooperation with the EU in the fields of politics, economy, security, culture and so on. Besides between the EU and Armenia was written jointly agreed Action plan, which included priority goals and objectives of the parties.

Bilateral relations between Armenia and the European Union are particularly important issues related to the unresolved Armenian-Turkish relations, the closed Armenian-Turkish border, the non-recognition by Turkey of the Armenian genocide. All these issues have a direct impact on Turkey's EU accession.

2008 the EU announced about their new initiative, which is known as the Eastern Partnership, and May 7, 2009 in Prague held its official establishment. Eastern Partnership was to strengthen cooperation between the European Union and the Republic of Armenia, but the decision of the Armenian government to join the Customs Union has generated some controversy associated with the implementation of the Eastern Partnership. Despite this, Armenia and the European Union continue their close cooperation in various fields.

The main findings and results of the study are summarized in the conclusion.